

ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ԴԱՏ ԲԱՑԱԾ Է
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ (Հ.Բ.Ը.Մ.) ԴԵՄ
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՓԱԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ ՀԱՍԱՐ

ՅԱԿՈՒ ՕԿԱՅԵԱՆ

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս , Յովհաննու Կարապետի տօնին առթիւ, Կիրակի, Յունուար 16, 2005-ին, “Հ.Բ.Ը.Մ. Քալիֆորնիոյ Մելգոնեան Սանուց” եւ “Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ” Կազմակերպութիւնները, որպէս երախտագիտութիւն, հոգեհանգիստ կազմակերպած էին Գրիգոր եւ Կարապետ Աղա Մելգոնեաններու հոգիներուն ի խաղաղութիւն, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, հոծ թուով մելգոնեանցիներու եւ բարեկամներու ներկայութեան: Ըստ նախապէս ղրկուած հաղորդագրութեան, հոգեհանգիստին պիտի յաջորդէր հոգեճաշ՝ Փասատինայի Պէշկէօթիւրեան սրահին մէջ:

Հարիւրէ աւելի նախկին եւ նոր Մելգոնեանցիներ եւ բարեկամներ, Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան Տօներուն առթիւ, որպէս մէկ ընտանիքի անդամներ, զիրար կը շնորհաւորէին եւ մտահոգութեամբ կը հետաքրքրուէին 2005-ի Յունիսին, Հ.Բ.Ը.Մ.ի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը (ՄԿՀ) փակելու որոշման մասին: Աւելի քաջատեղեակներ կ'ըսէին թէ “Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ կազմակերպութիւնը” վարձած է Լոս Անճելըսի մէջ MacCarley & Rosen, PLC իրաւաբանական ընկերութիւնը, որպէսզի իրաւական գետնի վրայ հետապնդէ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը գալիք սերունդներուն համար բաց պահելու անհրաժեշտութիւնը:

Հանդիսավար՝ Կարօ Գասապեանի հրաւերով ներկաները յոտնկայս երգեցին Մելգոնեան Կրթական Հաստատութեան Քայլերգը : Կային երկու զեկուցաբերներ: Առաջինը՝ “Հ.Բ.Ը.Մ. Մելգոնեան Սանուց Միութեան” ատենապետ՝ Զաւէն Պէրպէրեան, իսկ երկրորդը՝ “Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան” ատենապետ՝ Րաֆֆի Յնժալեան: Պարոյր Սեւակէն, օրուան պատշաճ , երկու կտոր արտասանեց Յակոբ Հայրապետեան: Առաջին զեկուցաբերը Սանուցի ներքին կազմակերպական աշխատանքներուն մասին խօսեցաւ, իսկ երկրորդը՝ Մելգոնեանը բաց պահելու նպատակաւ իրաւական գետնի վրայ տարուած աշխատանքներու մասին ու “պայթեցուց ռուները...” 1926-ին, հանգուցեալ Կարապետ Աղա Մելգոնեան իր եւ եղբօրը՝ Գրիգոր Աղա Մելգոնեանի ամբողջ հարստութիւնը կը կտակէ Պոլսոյ Պատրիարքութեան, որպէս իրաւական կտակակատար, կրթական հաստատութիւն մը հիմնելու պայմանով: Քաղաքական պայմաններու բերումով , յատենի պատրիարքութիւնը կտակը կը յանձնէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան **նախատեսուած կրթական հաստատութիւնը միշտ բաց պահելու պայմանաւ: 2005-ի Յունիսին**

Մելգոնեան Կրթական Հաստատությունը
փակելու Հ.Բ.Ը.Մ.ի որոշումը պայմանագրի
խախտումն նկատելով, Պոլսոյ
Պատրիարքությունը, որպէս իրաւական,
կտակակատար, դատ բացած է Հ.Բ.Ը.Մ.ին դէմ,
հաստատութիւնը միշտ բաց պահելու
նպատակաւ:

Որոտընթոստ ծափահարութեամբ ողջունուեցաւ այս յայտարարութիւնը
եւ կոչ ուղղուեցաւ աշխարհացոյի բոլոր Մելգոնեան Սանուց Միութիւններուն
զօրավիգ կանգնիլ Պոլսոյ Պատրիարքութեան աշխատանքներուն:

Յայտարարուեցաւ նաեւ, թէ հաղորդագրութիւն մը պիտի տրուի
մամուլին:

Ներկաները ուրախ եւ գոհ տրամադրութեամբ մեկնեցան սրահէն: